

**Ազգային ժողովին ներկայացվելիք հաղորդում  
Ջրի ազգային ծրագրի միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ**

Ջրի ազգային ծրագիրը ընդունվել է 2006թ. և կարգավորում է ՀՀ ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները՝ ընդգրկելով ազգային ջրային պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, Ջրի ազգային ծրագրի իրականացման միջոցառումները՝ ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

Ջրային ոլորտի ներկա իրավիճակը թելադրում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ոլորտի առանցքային հիմնախնդիրների լուծմանը:

«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ ջրի ազգային ծրագրի միջոցառումների հստակեցման և արդիականացման նպատակով:

«Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծով հստակեցվել են օրենքի միջոցառումների փուլային ծրագրի կատարման գործընթացը:

Ստորև աղյուսակում ներկայացվում են Բնապահպանության նախարարության լիազորությունների շրջանակներում գտնվող Ջրի ազգային ծրագրի միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ըստ առանձին կետերի:

**ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

Հիմնախնդիրներ	Ակնկալվող արդյունքները	Իրականացված միջոցառումներ
<p>Օրենսդրական հիմքերի ներդաշնակեցում, համալրում և բարելավում:</p>	<p>Ջրային ոլորտում կիրառվող միասնական և համաձայնեցված օրենքներ, կանոնակարգեր և ընթացակարգեր, ՀՀ ջրային օրենսգրքի, «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքի իրականացումն ապահովող հստակ օրենսդրական միջավայր: Հայաստանի Հանրապետության ջրային ոլորտի իրավական և կարգավորող հիմքերը համաձայնեցնող գործող միավոր՝ որպես ջրային ոլորտի իրավական լծակների միջնորդ մեխանիզմ:</p>	<p>Ջրային ոլորտը կարգավորող իրավական ակտերը կատարելագործելու և ներդաշնակեցնելու նպատակով ընդունվել են նոր իրավական ակտեր, փոփոխություններ և լրացումներ են կատարվել մի շարք իրավական ակտերում, այդ թվում՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 23.06.15 ՀՕ-108-Ն ՀՀ օրենք,</li> <li>2. «ՀՀ ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 02.03.2018թ. ՀՕ-126-Ն ՀՀ օրենք,</li> <li>3. ՀՀ վարչապետի 2017թ. մայիսի 6-ի «Արարատյան դաշտի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N413-Ն որոշում,</li> <li>4. ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի «Ջրային ռեսուրսների պետական կադաստրի վարման կարգը հաստատելու մասին և ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 23-ի N 1060-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» N 68-Ն որոշում,</li> <li>5. ՀՀ կառավարության կողմից 2017թ. մարտի 9-ին ընդունվել է «Ախուրյանի ջրավազանային տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N240-Ն որոշումը և «Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N10 արձանագրային որոշումը,</li> <li>6. ՀՀ կառավարության կողմից 2016թ. մարտի 31-ին ընդունվել է «Արարատյան</li> </ol>

		<p>ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N338-Ն որոշումը և «Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N12 արձանագրային որոշումը,</p> <p>7. ՀՀ կառավարության կողմից 2016թ. մայիսի 26-ին ընդունվել է «Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N539-Ն որոշումը և «Հարավային ջրավազանային կառավարման տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N20 արձանագրային որոշումը,</p> <p>8. ՀՀ կառավարության 2018 թվականի հունվարի 25-ի «ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N927-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N57-Ն որոշում,</p> <p>9. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի N499-ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N225 – Ն որոշում,</p> <p>10. 2017 թվականի հոկտեմբերի 26-ի նիստի N 45 արձանագրության 6-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի նիստի N4 արձանագրության 5-րդ կետով հավանության</p>
--	--	---

		<p>արժանացած արձանագրային որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշում,</p> <p>11. ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի «Ըստ գետավազանների ջրային հաշվեկշռի որոշման մեթոդին հավանություն տալու մասին» N48 արձանագրային որոշում:</p>
<b>Ինստիտուցիոնալ զարգացում</b>		
Ջրավազանային կառավարման մարմինների զարգացում:	Ջրավազանային կառավարման մարմինները միջին ժամկետում իրենց տեղն ու դերն են ձեռք բերում ջրային ոլորտում՝ շարունակաբար ամրապնդելով իրենց դերը՝ որպես ջրավազանում ջրային ռեսուրսների բոլոր հարցերի համար հիմնական պատասխանատու մարմին:	2016-2018թ.-ի ընթացքում հաստատվել են Արարատյան, Հարավային, Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանները և ներկա դրությամբ մշակման փուլում են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները: Պլանները արդյունավետ գործիք են տվյալ ջրավազանային կառավարման տարածքներում ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման համար, ինչպես նաև նպաստում են ջրավազանային տարածքային կառավարման բաժինների կողմից իրենց սպասարկման տարածքում ջրային ռեսուրսների առնչվող հարցերի կարգավորմանը:
Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից ջրօգտագործման, ջրահեռացման, ինչպես նաև ջրային համակարգերում ջրակորուստների նորմատիվների մշակման և հաստատման կարողությունների զարգացում	Կնպաստի ջրակորուստների նվազեցմանը	Ջրակորուստների նորմատիվները մշակվելու են ՀՀ ԷԵԲՊՆ-ի ջրային կոմիտեի կողմից և պետք է համաձայնեցվի Բնապահպանության նախարարության հետ:
Մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակում:	Ընտրված գետավազանում մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների վերաբերյալ տվյալների (որակ և քանակ) հավաքագրման, վերամշակման, վերլուծության, ամփոփման և վարման ամբողջական համակարգի (համակարգերի) վերականգնում: Պահանջվող տվյալների	Հարարավային, Արարատյան և Ախուրյանի ջրավազանային կառավարման պլաններում ներառված են մոնիտորինգի նոր ծրագրերի առաջարկները: Բացի այդ, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների մոնիթորինգի նոր ծրագրերի մշակման համար ֆինանսական միջոցներ ներգրավելու նպատակով ծրագրերի մշակումը ներառվել է

	<p>և տեղեկատվության հիման վրա մշակված մոնիթորինգի ռազմավարության և ազգային ծրագրի, տվյալների և տեղեկատվության բարելավված փոխանակում, որը կհանգեցնի ջրավազանային մակարդակում տարբեր գերատեսչությունների միջև համագործակցության և համակարգման ամրապնդմանը:</p> <p>Ստորերկրյա ջրերի մակարդակները համակարգված և պարբերականորեն չափվում են հիմնական մոնիթորինգի ցանցում, որը կազմված է մոտավորապես 128 դիտարկետերից:</p> <p>Հավաքված տվյալները պահվելու են ջրային ռեսուրսների պետական կադաստրում:</p>	<p>«Հայաստանի հանրապետության և Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ եվ ընդլայնված գործընկերության համաձայնագրի վերաբերյալ ճանապարհային քարտեզում և գործողությունների ծրագրում:</p>
<p>Ջրօգտագործման իրավունքի ինստիտուտի կատարելագործում:</p>	<p>Թափանցիկ և տեղեկատվության վրա հիմնված որոշումների կայացում ապահովող ջրօգտագործման թույլտվությունների արդյունավետ ու դյուրին կիրառվող համակարգ, որը նաև ապահովում է իրավակիրարկումն ու վերահսկումը:</p>	<p>Ներկա դրությամբ աշխատանքեր են վարվում ԱՄՆ ՄՋԳ-ի հետ ջրօգտագործման թույլտվությունների էլեկտրոնային տրամադրման նպատակով ծրագրային կաթեթի մշակման համար:</p>

<p>Ջրային ռեսուրսների պետական կադաստրի ինստիտուտի կատարելագործում:</p>	<p>Ջրային ոլորտի ամփոփ տվյալներ ու տեղեկատվություն պարունակող կենտրոնացված տվյալների համակարգ՝ ջրային ոլորտի որոշումների կայացման գործընթացին աջակցություն և հասարակության իրազեկության բարձրացում:</p>	<p>Մինչև ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N68-Ն որոշման ուժի մեջ մտնելը՝ ջրային պետական կադաստրի վարումը իրականացվում էր ՀՀ կառավարության 2003թ հուլիսի 23-ի N 1060-Ն որոշման համաձայն:  2017 թվականի փետրվարի 2-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 68-Ն որոշումը:  2017թվականի մարտից ԱՄՆ ՄՁԳ-ի կողմից ֆինանսավորվող ԳԱՏՕ ծրագրի (Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն հանուն ռեսուրսների համալիր պահպանության) շրջանակներում սկսվել են ջրային պետական կադաստրի տեղեկատվական միասնական նոր համակարգի ստեղծման և բարելավման աշխատանքները, ինչը ներկայումս գտնվում է տվյալների մուտքագրման և թեստավորման փուլում:  Նոր համակարգի ներդրման ավարտից հետո ջրային պետական կադաստրի վարումը կիրականացվի ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 2-ի N68-Ն որոշման պահանջներին համապատասխան:</p>
<p>Ջրային ոլորտի կառավարման գործընթացում հասարակության իրազեկման բարելավում:</p>	<p>Ազգային ու ջրավազանային մակարդակներում ջրային ոլորտի պլանավորման ու որոշումների կայացման գործընթացներում հասարակության իրազեկության բարձրացում:</p>	<p>Ջրային պետական կադաստրում առկա տրված ջրօգտագործման թույլտվությունների վերաբերյալ տեղեկատվությունը եռամսյակային կտրվածքով հրապարակվում են <a href="http://www.mnp.am">www.mnp.am</a> և <a href="http://www.wrma.am">www.wrma.am</a> կայքերում:  Ջրային ոլորտում մշակված բոլոր իրավական ակտերը հրապարակվում են իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական <a href="http://www.e-draft.am">www.e-draft.am</a> կայքում:</p>
<p>Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման պլանների մշակում:</p>	<p>Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման հիմնական դերակատարների՝ ՀՀ ջրային օրենսգրքով սահմանված լիազորությունների ամբողջական կատարում:</p>	<p>2016-2018թ.-ի ընթացքում հաստատվել են Արարատյան, Հարավային, Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանները և ներկա դրությամբ մշակման փուլում են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանները, որոնք նախատեսվում է ավարտել մինչև 2021թ.-ը:</p>

<p>Սևանա լճի գործողությունների պլանի իրականացում:</p>	<p>Սևանա լճի էկոհամակարգի հավասարակշռության ապահովում:</p>	<p><b>Ներկայացված է կից հավելվածում</b></p>
<p>Ջրային ռեսուրսների և ջրային պաշարի բաղադրիչների գնահատում:</p>	<p>Ջրային ռեսուրսների և ջրային պաշարի վերաբերյալ ճշգրտված տվյալներ:</p>	<p>Ներկա դրությամբ գործում է 29.05.2008թ. «Ոստ գետային ավազանների Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշռի տարրերի, ինչպես նաև ջրային ռեսուրսների ու պաշարների բաշխումը սահմանելու մասին» N549-Ն ՀՀ կառավարության որոշումը, սակայն հաշվի առնելով տարիների ընթացքում կլիմայական փոփոխությունների գործոնը, անհրաժեշտ է վերանայել ջրային հաշվեկշիռը, որի համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ:</p>
<p>Ջրի որակի ապահովման նորմերի սահմանում և իրականացում:</p>	<p>Ջրային ռեսուրսների վրա ազդեցությունը սահմանափակող նորմերի ու ջրի որակի ապահովման նորմերի սահմանում</p>	<p>2011թ. հունվարի 27-ին հաստատվել է «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» N 75-Ն ՀՀ կառավարության որոշումը, որով սահմանվում են յուրաքանչյուր ջրավազանային տարածքի ջրի որակի ապահովման նորմերը:</p>
<p>Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանում և պահպանում յուրաքանչյուր գետվազանի համար:</p>	<p>Ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների պահպանություն:</p>	<p>Ներկա դրությամբ գործում է 20.01.2005 «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների մասին» N64-Ն որոշումը: Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանների շրջանակներում նախատեսվում է գնահատել ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիները՝ ըստ առանձին ավազանների և սահմանել հատուկ պահպանման չափորոշիչներ: Նախատեսվում է նաև «Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան» ծրագրի շրջանակներում վերանայել արդեն հաստատված Հարավային, ԵՄ «Ջրային նախաձեռնություն պլուս» ծրագրի շջանակներում</p>

		<p>Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանները և ներառել վերը նշված գոտիները:</p> <p>- Մշակվել և ընդունվել է Կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներին հավանություն տալու մասին» N 8 արձանագրային որոշում, որով սահմանվել են փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ,</p> <p>- մշակվել և սահմանված կարգով ԱԺ քննարկմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, որով ամրագրվել են նոր ՓՀԷԿ-երի կառուցման համար արգելված գոտիներ և կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման հիմքեր,</p>
<p>Արարատյան դաշտի նախկինում չորացվող գյուղատնտեսական հողերի կարգավիճակի ուսումնասիրություն:</p>	<p>Կառավարության որոշում՝ նախկինում չորացվող տարածքների ապագա օգտագործման վերաբերյալ, որին կիստևի հողօգտագործման ընտրված տարբերակի (գյուղատնտեսություն, գերխոնավ տարածքներ, ձկնարդյունաբերություն և այլն) համապատասխան կառավարման շրջանակի ընդունումը:</p>	<p>Գյուղատնտեսության նախարարության</p>



<p>Ջրերի ռազմավարական պաշարների ավելացում և գետային հոսքի կարգավորում:</p>	<p>Ջրամբարներում ջրի ազատ հոսքի կուտակում, ջրային ռեսուրսների առաջարկի կարգավորում:</p>	<p>ԷԵԲՊՆ ջրային կոմիտե</p>
<p>Ջրերի որակի կառավարման իրականացում:</p>	<p>Ջրերի որակի կառավարման ընդունված ռազմավարություն:</p>	<p>«Կառավարության հինգամյա գործողությունների ծրագրում ներառվել է Ջրային ռեսուրսների ողջամիտ օգտագործման և պահպանության ռազմավարության մշակման միջոցառումը, որը կներառի նաև ջրի որակի կառավարման և մոնիտորինգի հետ կապված առանձնահատկությունները և մարտահրավերները»</p>
<p>Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում արդի տեխնոլոգիաների ներդրում</p>	<p>Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում:</p>	<p>2018-2019թթ. ընթացքում աշխատանքներ են իրականացվել փոքր հիդրոէլեկտրակայաններում առցանց ջրաչափական սարքավորումների տեսադրման շուրջ: Մինչ օրս ժամանակակից, առցանց ջրաչափեր են տեղադրվել 97 փեկերում:</p> <p>Բացի այդ, ԱՄՆ ՄՁԳ «Գիտական առաջադեմ տեխնոլոգիաների օգտագործում և համագործակցություն» (ԳԱՏՕ) ծրագրի աջակցությամբ Արարատյան դաշտի ձկնաբուծական տնտեսությունների ջրառի կետերում տեղադրվել են թվով 19 առցանց հոսքաչափական սարքավորումներ:</p> <p>Կատարվել է համակարգչային «SCADA» անալոգային ծրագրային փաթեթի փորձնական տարբերակի ներդրում և փորձարկում, ինչպես նաև համակարգի հավելյալ գործիքների ուսումնասիրում: Կատարվում է փաստացի օգտագործված ջրաքանակի նկատմամբ առցանց գննություն:</p> <p>Մշակվել և ընդունվել է Կառավարության 2019 թվականի հունվարի 17-ի «Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգին և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 39-Լ որոշում, որով ներկայացվել են ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը և ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, առաջարկվող լուծումներն ու առավելությունները, ինչպես նաև հաստատվել են նպատակների իրականացման</p>

<p>Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարում:</p>	<p>Անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման ընդունված ծրագիր:</p>	<p>ուղղված միջոցառումները:</p> <p>Համաձայն ՀՀ նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի Հ-174-Ն հրամանագրի 1-ին կետով հաստատված կարգի և 121-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարությունների միջև 2001 թվականին ստեղծված տնտեսական կապերի կոորդինացված միջկառավարական հանձնաժողովի և դրա հիման վրա 2001 թվականի դեկտեմբերի 27-ին թեհրանում ստորագրված Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության և Իրանի Իսլամական Հանրապետության բնապահանական վարչության միջև բնապահպանական համագործակցության Փոխընթացման հուշագրի 4-րդ կետի պահանջների 2005 թվականի ստեղծել և մինչ առ այսօր գործում են հայ և իրանական փորձագետների աշխատանքային խմբեր, որոնց գործունեությունը նպատակաուղղված է Արաքս գետի ջրի աղտոտվածության ուղղման սիրման իրականացմանը և ջրի որակի վերլուծությանը:</p>
<p>Ջրամատակարարման ջրահեռացման ծառայությունների բարելավում:</p>	<p>և Ոռոգման համակարգի զարգացում՝ կառավարման համընդհանուր տնտեսական և սոցիալական ռազմավարություններին, ռազմավարություններին, գյուղատնտեսական ապրանքների շուկաներին և ֆինանսական կայունության սկզբունքներին համապատասխան: Մշակված ազգային ռազմավարություն, որն ուղղորդում է համայնքի կողմից առաջնորդվող՝ հանրային ջրամատակարարման և ջրահեռացման կառույցների վերանախագծման, վերականգնման և</p>	<p>ԷԲՊՆ ջրային կոմիտե</p>

	շինարարության գործողությունների ծրագիրը:	
Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովում:	Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության ապահովման և շահագործման հուսալիության միջոցառումների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված ընդունված ծրագիր: Պետական նշանակության հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործման և պահպանության համար պատասխանատու մարմինների լիազորությունների հստակ սահմանում:	ԷԲՊՆ ջրային կոմիտե